ռաւ Սիս ի քրիստոնէից և էր յայն ժամանակն կաթողիկոս Հայոց տէր Կոստանդին Լամբրոնացին. այր իմաստուն և հանճարեղ, և էր թագաւոր Հայոց Պր. լեւոն, որդի բրինձին, սա թագաւորեաց Հայոց ամիս է. սա վարեցաւ գերի յեգիպտոս, թագուհիւն իւրով և որդւովք իւրովք. բայց մեծ թագուհին Հայոց Մարիւն յերուսաղէմ մեծաւ առաքինի ճշմարտութեամբ ամս..? և հանգեաւ ի Քս. ի թուաբերութեան Պ... և ի յուլիս ամսոյ ԺԸ.. (անընթեռնլի) վասն զի յոյժ ողորմած էր եւ աղքատասէր, սա թաղեցաւ առաջի դրան սբ. Յակոբայ, սա պարգևեաց մեզ զսբ. նշան. որ տէր Յակոբ կաթողիկոս, ի սքմանէ ստացայ ես զսբ. եւ զաստուածախաւս աւետարան...» (Խաչ. Յուց.)։

Իսկ Մարտիրոս Կաֆայեցի Ս. Յակոբի վանքին Պատրիարքը իր Կարգ եւ թիւ թագաւորաց Հայոց գրուածքին մէջ այս մասին հետևեալ տողերը ունի.

«Յետ կոստանդեայ որ հուսկ յետին
Լեւոն արքայ ողորմելին,
տիրեալ ամիսս տասն և մին.
կորոյս զթագն ընդ աթոռին.
քանզի Սուլթանն Եգիպտոսին՝
եկեալ գերեաց զամենեսին,
զպարոնն և զիւրսն ի միասին.
եւ զթագուհի մօրու նոցին.
առ որ խրզճեալ բռնաւորին,
թողու ազատ զայն թագուհին
ասէ գնալ ուր որ կամիս.
իսկ նա գիմէ ի Պաղեստին։
Հասնի զբրաւ կենաց նորին
յերուսաղէմ սուրբ քաղաքին.
թաղի ընդ սեամբ սուրբ տաճարին,
Հայոց ազգի սուրբ աթոռին։
ի յութ հարիւր Հայոց թվին
քսաներեք աւելորդին»։

(= 1374)։ (Պտմ. Հայ. Դպր. Բ. էջ 130)։